

Հաճախ որոշ հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միակ միջոցը լինում է սերմերի քիմիական ախտահանումը: Ախտահանիչների կիրառությունը հնարավորություն է տալիս խուսափել հացազգի մշակաբույսերի այնպիսի հիվանդություններից, ինչպիսիք են կարծրամրիկը, փոշեմրիկը, արմատային փտումները, սերմերի բորբոսնումը և այլն: Հացահատիկի բզեզների, լվիճների, ճանճերի դեմ պայքարի համար կարելի է օգտագործել միջատասպան ախտահանիչներ, օրինակ՝ կրույզեր 0.5լ/հա նորմայով (բանվորական հեղուկի ծախսը՝ 10լ): Համակցված միջատասպան և սնկասպան ախտահանիչների օգտագործումը, ինչպիսին է սելեստոպ ախտահանիչը, որը պաշտպանում է սերմերը հողաբնակ վնասատուներից և հիվանդության հարուցիչներից՝ միննույն ժամանակ համարվելով աճի խթանիչ: Մշակաբույսերի բերքատվությունը սերմերի ախտահանման դեպքում բարձրանում է 15-20%-ով: Ախտահանման ժամանակ պետք է պահպանել օգտագործվող պրեպարատի երաշխավորվող նորման: Չափաքանակի բարձրացումը բացասաբար է ազդում սերմերի ծլունակության և դիմացկունության վրա, իսկ ոչ բավարար չափաբաժնով ախտահանիչի օգտագործումը չի տալիս սպավելիք արդյունքը: Սերմերը կարելի է ախտահանել ցանքից անմիջապես առաջ կամ ավելի շուտ: Ախտահանման ժամկետը կախված է պրեպարատից և մշակաբույսից: Տարբերում են ախտահանման հետևյալ եղանակները՝ թաց, կիսաթաց և չոր: Ցանկալի է նախապատվությունը տալ հեղուկ ախտահանիչների օգտագործմանը, ինչպիսին են վերջին տարիներին լայն կիրառություն ստացած ռաքսիլ, դիվիդենտ, կրույզեր ախտահանիչները: Սերմնայութի ախտահանումը կարելի է իրականացնել ախտահանիչ մեքենաներով, իսկ ստացիոնար պայմաններում ախտահանումը իրականացնում են սերմնանյութի լուծույթի մեջ ընկղմամբ կամ սրսկմամբ, որից հետո սերմնանյութը ցանկալի է ենթարկել չորացման: Օրինակ՝ ռաքսիլ պրեպարատով հացահատիկի ախտահանումը անհրաժեշտ է իրականացնել ցանքից 10-14 օր առաջ: 1տ. Սերմ ախտահանելու համար անհրաժեշտ է 10լ ջրին ավելացնել 0.5լ ռաքսիլ պատրաստուկ և խառնել: Սերմնանյութը հավասարաչափ լցնել հատակին, որը նախապես պետք է ծածկված լինի պոլիէթիլենային թաղանթով: Պատրաստի ախտահանիչը տարածել սերմնանյութի վրա սրսկիչով: Ախտահանման ընթացքում սերմնանյութը խառնել ոչ մետաղական բահերով: Ժամանակին, որակով և ճիշտ ախտահանումը պայքարի արդյունավետությունը հասցնում է 90-95%-ի:

Մյուզաննա Մարգարյան,

ԳՆ բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին